

**Պետական մարմինների և նրա պաշտոնատար անձանց որոշումները կամ գործողությունները/անգործությունը/ վիճարկելու դատական կարգը**

Պետական մարմինների և նրա պաշտոնատար անձանց որոշումները կամ գործողությունները/անգործությունը/ վիճարկելու դատական կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով /այսուհետ՝ օրենսգիրք/:

Օրենսգրքի 1-ին հոդվածի հանաձայն <Սույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (այսուհետ՝ վարչական դատարան), Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) և Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (այսուհետ՝ վճռարեկ դատարան) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը>:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն < 1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության>:

Վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները սահմանված են օրենսգրքի 64-75-րդ հոդվածներով:

Հանաձայն օրենսգրքի 64-րդ հոդվածի < Վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա>:

Հայցը ներկայացնելու ժամկետները սահմանված են օրենսգրքի 71-րդ հոդվածով: Հայցադիմումին ներկայացվող պահանջները և հայցադիմումին կցվող փաստաթղթերը նախատեսված են օրենսգրքի 72 և 73-րդ հոդվածներում:

Հայցադիմումը հայցվորը ներկայացնում է դատարան առձեռն կամ ուղարկում է փոստով: Հայցադիմումը պատասխանողին և գործին սնանակցող մյուս անձանց ևս ուղարկվում է փոստով՝ օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով: